



ԵՐԱՌԵԱՐԹԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2025

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ

**Նայեաց սիրով, Հայրդ գթած, Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.**

**Եւ զբանակս Հրեշտակաց, Տուր պաՀապան մեզ տկարացս,**

**Փրկեա զանձինս ի փորձանաց, Ի խաւարի շրջող դիւաց.**

**Զի ի տուրնջեան եւ գիշերի, Տացուք քեզ փառս անդւելի:**

### ԱՊՈԹՔ

Մեր հոգիները դէպի քեզ կը բարձրացնենք, ով Աստուած, որովհետեւ դուն ես մեր լոյսն ու կեանքը. ողորդէ՛ մեր միտքը Քու լոյսովդ, որ կարող ըլլանք Քեզ ներկայացնել աշխարհի մէջ: Կապէ՛ մեր կեանքը Քու կեանքիդ հետ, որ Քեզմէ գորութիւն առնենք եւ այնպէս ապրինք որ մարդիկ մեզ տեսնելով Քու սուրբ անունդ փառաւորեն: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

*Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:*

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

ԱՍՏՈՒԱԾ ՅԱԽՏԵՆԱԿԱՆ Է, ՄԱՐԴԸ՝ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ

Տէր, ապաստան եղար մեզի սերունդէ սերունդ:  
 Նախֆան լեռներու ծնունդ առնելը,  
 նախֆան երկրին եւ տիեզերքին գոյութեան գալը,  
 դուն կաս ու կը մնաս, ով Աստուած:  
 Մարդը հողին կը վերադարձնես,  
 ըսելով. "Հողին դարձէ՛, ադամորդիներ":  
 Որովհետեւ քու աչքիդ՝ հազար տարին երէկուան պէս ակնթարթ մըն է,  
 գիշերուան մէկ պահուն պէս, որ արդէն իսկ անցած է:  
 Երազի պէս յանկարծակի վերջ կը դնես անոնց կեանքին.  
 Խոտին պէս, որ օրը օրին կը բուսնի,  
 առաւօտեան կը ծաղկի եւ կը դալարի, իրիկունը կը խամրի ու կը չորնայ:  
 Այդպէս կը սպառես մեզ բարկութեամբդ,  
 զայրոյթովդ կը զարհուրեցնես մեզ:  
 Երեւան կը հանես մեր յանցանքները,  
 մեր գաղտնիքները լոյսին կը բերես:  
 Սրտմտութեանդ հետեւանով մեր օրերը կը փախչին,  
 մեր կեանքը շուտ վերջ կը գտնէ, հառաչանքի կը նման:  
 Եօթանասուն տարի է մեր կեանքին տեւողութիւնը,  
 կամ թէ հազիւ ութսուն տարի.  
 որ՝ լաւագոյն պարագային՝ չարչարանք է ու նեղութիւն:  
 Կեանքը շուտով վերջ կը գտնէ, յաջորդ պահուն՝ արդէն չկանք:  
 Ո՞վ կը մանչնայ բարկութեանդ զօրութիւնը,  
 թէ իրապէս ինչ ահարկու է զայրոյթդ:  
 Սորվեցուր մեզի՝ թէ մեր օրերը համբուած են,  
 որպէսզի սրտով իմաստուն դառնանք:  
 Վերադարձիր մեզի, Տէր, մինչեւ ե՞րբ պիտի լինես.  
 գթա մեզի՝ ծառաներուդ:  
 Ամէն առտու մեզ քու սիրովդ ողողէ,  
 որպէսզի մեր կեանքի բոլոր օրերուն  
 ցնծութեամբ երգենք եւ ուրախանանք:  
 Ուրախացուր մեզ հիմա, այն օրերուն եւ բոլոր տարիներուն փոխարէն,  
 որոնց ընթացքին մեզ տրտմեցուցիր՝ չարչարանքի մատնելով:  
 Ցոյց տուր մեզի՝ ծառաներուդ՝ քու գործերդ,  
 եւ մեր յաջորդ սերունդներուն՝ քու փառքդ:  
 Շնորհիդ մեզմէ անպակաս ըրէ, Տէր, մեր Աստուածը.  
 մեր գործերը դուն առաջնորդէ, մեր գործերը յաջողէ:

## ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 90

### ԱՍՏՈՒԱԾ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ Է, ՄԱՐԴԸ՝ ՄԱՀԿԱՆԱՅՈՒ

Հեղափոխական Սաղմոս մըն է, որուն հեղինակը աւանդութեան համաձայն եղած է Մովսէս: Ան այս Սաղմոսով կը ներկայացնէ Աստուծոյ յաւիտենականութիւնը եւ մարդուն մահկանացու ըլլալը: Առաջին իսկ տողերը կու գան ցոյց տալու այդ յաւիտենականութիւնը երբ կ'ըսէ. "Տէր դուն ապաստան եղար մեզի սերունդէ սերունդ": Երկրորդ, Աստուծոյ յաւիտենականութիւնը, նախքան երկրին ու փիեզերքին ըլլալը, Ան կայ ու կը մնայ: Մինչ մարդ արարածի պարագային, մահկանացու եւ հողին վերադառնալու: Անոր կեանքը կը նմանի երագի, դաշտի խոտի, որ յանկարծակի վերջ կը դրուի, առաւօտուն կը ծաղկի իսկ իրիկուան կը խամրի: Աղօթքը կը շարունակուի, այս անգամ կը ներկայացնէ Աստուծոյ բարկութիւնը, եւ այդ բարկութեամբ կը սպառէ մարդը, եւ Իր գայրոյթով կը զարհուրեցնէ: Երեսն կը հանէ յանցանքները եւ գաղտնիքները լոյսին կը բերէ: Ահա մեղքի պարճառով է որ մարդուն կեանքը շուրջ վերջ կը գտնէ: Ահա մարդուն կեանքը կը սահմանափակուի եօթանասուն, իսկ լաւագոյն պարագային՝ ութսուն, այդ ալ չարչարանք եւ նեղութիւն: Յետոյ կը խնդրէ որ տէրը սորվեցնէ մարդուն թէ իր կեանքի օրերը համրուած են, որպէսզի սրտով ու խորհուրդներով իմաստուն դառնայ, եւ այդ իմաստութեամբ ապրի իր կեանքի օրերը: Ի վերջոյ, կը խնդրէ, որ Տէրը վերադառնայ, չքէ մարդս եւ գթա: Կը խնդրէ, որ Տէրը իր սիրովը ողորդէ, որպէսզի մարդուս կեանքին օրերը ուրախութեամբ լեցուին: Կը նշանակէ, մարդուս ուրախութեան միակ աղբիւրը Աստուծոյ սիրովը լեցուիլն է: Յետոյ, կայ նաեւ փրկմանն ու չարչարանքի փառքիներուն փոխարէն ուրախութեամբ լեցուելու, այդ ալ յաւիտենականութեան մէջ: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, այժմ փխուր ենք, յետոյ ուրախանալու: Ի վերջոյ, կը խնդրէ, որ Աստուած իր գործերը ցոյց տայ, այն գործերը, որոնք նաեւ Իր փառքն են: Աստուծոյ գործերը՝ այսինքն՝ փրկագործութեան: Առիթով մը Յիսուս Քրիստոս պիտի ըսէր. "Հասաւ ժամը Որդիին փառաբանման": Խորքին մէջ, այդ պահը խաչելութեան պահն էր, բայց նաեւ Անոր փառքին: Աւարտին, կը խնդրէ որ Աստուած Իր շնորհքը անպակաս ընէ, մեր գործերը առաջնորդէ եւ յաջողէ: Այսինքն՝ մահկանացու, մեղաւոր մարդուն գործերը, որոնք անկարար են, թերի են, բայց Աստուած Ինք թող որ իմաստ տայ այդ գործերուն: Այնպէս ինչպէս երեխան իր նուէրը կու տայ իր ծնողքին, իբրեւ երախտագիտութիւնը, ծնողքը զայն կ'ընդունի ուրախութեամբ եւ ողորմութեամբ: Ինչով կրնանք չափել Աստուծոյ տուած օրհնութիւնները մեր գործերով: Անչափելի են, բայց Աստուած այդ գործերուն կը նայի ողորմութեամբ: Այս աղօթքը, իւրաքանչիւր մարդու աղօթքը պէտք է ըլլայ, ուր անդրադառնայ Աստուծոյ յաւիտենականութեան եւ իր մահկանացու ըլլալուն: Անդ-բաղառնայ իր մեղաւոր ըլլալուն, եւ այդ մեղաւորութեան պարճառով Աստուծոյ գայրոյթն ու բարկութիւնը: Սակայն, խնդրելու Աստուծմէ, որ ողորմութեամբ նայի մեղաւոր մարդուն: Ահա այդ ողորմութիւնը ցոյց տուաւ աշխարհի դրկելով Իր Միածին Որդին, մեր Տէրն ու փրկիչ Յիսուս Քրիստոսը: Անոր աշխարհ գալուստով, Ան եկաւ Իր վրայ առնելու մեղքը, խաչին վրայ վճառելու գինը, եւ անով նաեւ մեր առջեւ ճամբան բանալու դէպի Աստուած երթալու, եւ մեզ սորվեցնելու թէ ինչպէս կարելի է ապրիլ Աստուծոյ հետ ինչպէս:

**Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ եւ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ր եւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:**